

## ԿԱՐՄԻՔ

*Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Սուրեն Ռաֆիկի Լևոնյանի՝ «ՀՀ դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունության տնտեսամաթեմատիկական վերլուծությունը» թեմայով ատենախոսության վերաբերյալ*

### *Ատենախոսության թեմայի արդիականությունը*

Հայաստանի Հանրապետության տնտեսությունը հաճախ է բնութագրվում գնաճի և համախառն եկամտի տատանողական վարքագծով: Նման վարքագծի պատճառները կարող են բազմազան լինել՝ արտաքին առևտրաշրջանառությունից մեծ կախվածություն, տնտեսության կառուցվածքային ոչ մեծ դիվերսիֆիկացիա, դոլարիզացիայի բարձր մակարդակ, ստվերային տնտեսության առկայություն և այլն: Նման տնտեսական պայմաններում դրամավարկային քաղաքականության դերը անկասկած մեծանում է, որի արդյունավետ կառավարմամբ հնարավոր է ապահովել գների կայունությունը, նպաստել տնտեսական աճին և զբաղվածության բարձր մակարդակին:

Գնաճի նպատակադրման ռազմավարության պարագայում հաջող դրամավարկային քաղաքականության իրականացման համար անհրաժեշտ է ունենալ հստակ փոխանցումային մեխանիզմներ, գնաճի կանխատեսված և թիրախային մակարդակների ճշգրտման համար կիրառված գործիքակազմի արդյունավետություն:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման ներկայիս պայմաններում մակրոտնտեսական ցնցումները և, հետևաբար, Կենտրոնական բանկերի գործողությունները պայմանավորված են ոչ միայն ներքին, այլև արտաքին ցնցումներով: Գլոբալացման այս գործընթացն ազդում է դրամավարկային քաղաքականության իրականացման վրա տարբեր առումներով և իր ետևից բերում է մի շարք պարզաբանման ենթակա հարցեր. արդյո՞ք նման տնտեսական պայմաններում Կենտրոնական բանկը կարողանում է կառավարել գնաճի մակարդակը, ինչպիսի՞ բացասական հետևանքներ է թողնում գնաճի տատանողական վարքագիծը, ի՞նչ գործոններ են ընկած գնաճի տատանողական վարքագծի հիմքում, ինչպե՞ս են ազդում գլոբալ զարգացումները երկրում ներքին դրամավարկային քաղաքականության արդյունավետության և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վրա, որո՞նք են այն փոխանցումային մեխանիզմները, որոնց արդյունավետ կառավարման միջոցով Կենտրոնական բանկը կարող է զսպել գնաճային ճնշումները կամ բարձրացնել տնտեսական ակտիվության մակարդակը: Հետազոտությունը նվիրված է այս հարցերի պարզաբանմանը, ինչն էլ պայմանավորում է ատենախոսության թեմայի արդիականությունը:

## *Հետազոտության նպատակը և հիմնական խնդիրները*

Ատենախոսության նպատակն է գնահատել ՀՀ դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունությունը ներքին և արտաքին գործոնների ցնցումների նկատմամբ, վերհանել գնաճի տատանողականության պատճառները և հետևանքները:

Վերոնշյալ նպատակների իրագործման համար ատենախոսության մեջ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմների էությունը, ներկայացնել զարգացող և զարգացած երկրներում փոխանցումային մեխանիզմի լծակների գործունեության տարբերությունները,

- նշել դրամավարկային քաղաքականության ռազմավարությունների առավելություններն ու թերությունները, Կենտրոնական բանկի գործիքակազմի կիրառման անհրաժեշտությունները և հետևանքները,

- նկարագրել դրամավարկային քաղաքականության էմպիրիկ գնահատման միջազգային փորձը և դրանց հիման վրա ՀՀ տնտեսության համար կառուցել և գնահատել տնտեսամաթեմատիկական մոդելներ,

- գնահատել ՀՀ-ում փողի պահանջարկի զգայունությունը դրամական տարբեր ագրեգատների դեպքում, բացահայտել ավանդների զգայունությունը տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ,

- գնահատել դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի լծակների արդյունավետությունը, բացահայտել այն լծակները, որոնք գործում են ՀՀ-ում: Ներկայացնել դրամավարկային քաղաքականության կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները տնտեսության իրական հատվածի վրա,

- էմպիրիկ վերլուծությունների հիման վրա որոշել ՀՀ-ում ՀՆԱ ճեղքի և գնաճի միջև կապի բնույթը, գնահատել գնաճի տատանողականության ազդեցությունը տնտեսական աճի վրա, պարզել գնաճի տատանողականության հիմքում ընկած գործոնները,

- Բացահայտել գլոբալ մակրոտնտեսական ցնցումների ազդեցությունը ՀՀ հիմնական դրամավարկային ցուցանիշների զգայունության վրա, պարզաբանել այդ ցնցումների՝ ՀՀ տնտեսության վրա փոխանցման ուղիները:

## *Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը*

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից:

Ատենախոսության «**Ներածություն**» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, առարկան և օբյեկտը, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են գիտական նորությունները, արդյունքների տեսական ու գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Դրամավարկային քաղաքականության ցուցանիշների փոխկապվածությունները**» գլխում մեկնաբանվել են դրամավարկային քաղաքականության ցուցանիշների փոխկապվածությունների մասին տարբեր տնտեսագիտական դպրոցների հիմնական դրույթները համեմատական վերլուծության միջոցով: Նկարագրվել են դրամավարկային քաղաքականության հիմնական ռազմավարությունները, դրանց կիրառման առավելություններն ու թերությունները: Նկարագրվել են փոխանցումային մեխանիզմի այն լծակները, որոնց միջոցով ԿԲ-ն կարող է ազդեցություն ունենալ պահանջարկի և, հետևաբար, գնաճի վրա: Առաջին գլուխը եզրափակվել է դրամավարկային քաղաքականության ցուցանիշների վարքագծի վերլուծությամբ:

Ատենախոսության երկրորդ՝ «**Դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունության գնահատման մեթոդաբանական հիմքը**» գլխում նախ ամփոփվել է փոխանցումային մեխանիզմի և դրամավարկային քաղաքականության արդյունավետության, ինչպես նաև փողի պահանջարկի զգայունության գնահատման միջազգային և Հայաստանին վերաբերող փորձի վերլուծությունը: Այս գլխում հեղինակը ներկայացրել է նաև ատենախոսության երրորդ գլխում տնտեսամաթեմատիկական վերլուծության համար կառուցված մոդելների նկարագրությունը և մեթոդաբանական ակնարկը:

Ատենախոսության երրորդ՝ «**Դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունության գնահատումը ՀՀ-ում**» գլխում կատարվել են ՀՀ-ում փողի պահանջարկի զգայունության, դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի արդյունավետության և երկարաժամկետ ազդեցության, գնաճի և ՀՆԱ ճեղքի տատանողականության երկարաժամկետ կապի, ՀՀ դրամավարկային քաղաքականության ցուցանիշների վրա արտաքին գործոնների ազդեցության գնահատումներ հեղինակի կողմից կառուցված տարբեր՝ ավտոռեգրեսիվ բաշխված լազի, վեկտոր ավտոռեգրեսիվ և կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիվ մոդելների միջոցով:

## *Աշխատանքի հիմնական գիտական արդյունքները և գիտագործնական նշանակությունը*

Ատենախոսի կողմից ներկայացված ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ու նորույթը կայանում են հետևյալում.

1. ՀՀ-ում փողի պահանջարկի զգայունության գնահատման համար ձևավորվել է ավտո-ռեգրեսիվ բաշխված լագով (ARDL) մոդել: Գնահատվել է փողի պահանջարկի զգայունությունը ՀՆԱ-ից, գնաճից և ռեպո տոկոսադրույքից, ինչպես նաև ավանդների պահանջարկի զգայունությունը՝ արտարժույթով և դրամով ավանդների տոկոսադրույքներից:

2. Բացահայտվել է, որ M2 դրամական ագրեգատի վրա նշանակալի ազդեցություն ունի ՀՆԱ-ն, M1-ի վրա՝ և՛ ՀՆԱ-ն, և՛ գնաճը, և՛ տոկոսադրույքը, իսկ դրամային ավանդների ծավալի վրա նշանակալի և առավել մեծ ազդեցություն ունի արտարժույթային ավանդների տոկոսադրույքը:

3. Կառուցվածքային վեկտոր ավտոռեգրեսիվ մոդելի միջոցով գնահատվել է դրամավարկային քաղաքականության փոխանցումային մեխանիզմի արդյունավետությունը ՀՀ-ում: Հիմնավորվել է, որ ՀՀ-ում դրամավարկային քաղաքականության շուրջ առնվազն 3 փոխանցումային լծակների միջոցով ազդում է տնտեսության իրական հատվածի վրա:

4. Գնաճի տատանողականության ազդեցությունը երկրի տնտեսական աճի վրա ներկայացնող մոդելի գնահատման արդյունքները հաստատում են, որ գնաճի և ՀՆԱ տատանողականության միջև գոյություն ունի երկարաժամկետ կապ, և դիտարկված գնաճի ցածր տատանողականություն ունեցող երկրներում տնտեսական աճը կայուն է:

5. Վեկտոր ավտոռեգրեսիվ մոդելի (VAR) միջոցով բացահայտվել է ՀՀ-ում գնաճի, ՀՆԱ ճեղքի և փոխարժեքի տատանողականության վրա ազդող հիմնական արտաքին գործոնները: Բացահայտվել է, որ ՀՀ հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները խիստ զգայուն են արտաքին ցնցումների նկատմամբ: Ձևավորվել են ՀՀ տնտեսության վրա վերոնշյալ ցնցումների ազդեցության փոխանցման հնարավոր մեխանիզմները:

Ատենախոսության շրջանակներում կատարված հետազոտությունները կարող են օգտակար լինել ՀՀ Կենտրոնական բանկին՝ դրամավարկային քաղաքականությունը մշակելու ընթացքում, ինչպես նաև այլ հետազոտողներին՝ դրամավարկային քաղաքականության բազմակողմանի ազդեցությունների առավել խորը ընկալման համար:

## *Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ*

Ատենախոսությունը գերծ չէ նաև թերություններից, որոնցից մեր կողմից կարևորվել է հետևյալը.

1. Ատենախոսը կատարել է արտասահմանյան գրականության բավականին լայն ուսումնասիրություն, սակայն աշխատանքը կշահեր, եթե հեղինակը առավել մեծ ուշադրություն դարձներ ՀՀ-ում այլ հետազոտողների կատարած աշխատանքներին, ինչը հնարավորություն կտար համեմատական վերլուծություններ կատարել ինչպես ստացված արդյունքների, այնպես էլ կիրառված մեթոդների միջև:
2. Էջ 90-ում, աղյուսակ 3.2.3-ում հեղինակը ՀՀ դրամավարկային ցուցանիշները համեմատում է ԱՄՆ, Եվրո գոտու երկրների և ՌԴ համապատասխան ցուցանիշների հետ: Ցանկալի կլիներ կատարել համեմատություն նաև ՀՀ-ի տնտեսությանը նման տնտեսություն կամ զարգացվածության նման մակարդակ ունեցող երկրների հետ, ինչից կարող էին առաջանալ որոշակի եզրակացություններ տվյալ երկրներում դրամավարկային քաղաքականության ցուցանիշների տարբեր վարքագծերի մեկնաբանման համար:
3. 3.2 գլխում փոխանցումային մեխանիզմների արդյունավետությունը գնահատելիս օգտագործվել է VAR մեթոդ: Կարծում եմ, որ կոինտեգրացիայի ստուգումը և դրա գոյության պարագայում VEC մոդելի կիրառությունը կարող էր ավելի ճշգրիտ արդյունքներ ապահովել:

### *Եզրակացություն*

Մեր կողմից նշված դիտողությունները որևէ բացասական ազդեցություն չունեն հետազոտության արդյունքների վրա: Սուրեն Ռաֆիկի Լևոնյանի ատենախոսությունն ունի գիտագործնական նշանակություն, ատենախոսը կատարել է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն, որում կատարված են որակյալ վերլուծություններ, որոնք բխում են առաջադրված խնդիրներից:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են 6 գիտական հոդվածներում: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Սուրեն Ռաֆիկի Լևոնյանի «ՀՀ դրամավարկային քաղաքականության ցուցանիշների զգայունության տնտեսամաթեմատիկական վերլուծությունը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն

